ՓԱԽՈՒՍՏԸ ԵԳԻՊՏՈՍ. ՀԻՍՈՒՍԻ ՀՐԱՇԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆ «ՄԱՆԿՈՒԹԵԱՆ ԱՒԵՏԱՐԱՆՈՒՄ»

ՄԱՄՅԱՆ Մ.
marimamyan87@gmail.com

Հիսուսի կյանքը պատկերող բազմաթիվ գեղարվեստական, գիտահանրամատչելի և այլ բնույթի ֆիլմերն ու գրքերն, անշուշտ, ստեղծվել և ստեղծվում են հիմնականում նորկտակարանային տեղեկությունների հիման վրա: Այնուամենայնիվ, վերջիններս չեն տալիս Հիսուսի կյանքի մանրամասները, և այստեղ է, որ օգնության են գալիս պարականոն գրվածքները, որոնք թեև հիմնականում մտացածին են, այնուհանդերձ, պարականոնների միջոցով է հնարավոր է դառնում փոքրիշատե պատկերացում կազմել Հիսուսի կյանքի, հատկապես՝ մանկության տարիների մասին: Պարականոնները գրավոր աղբյուրների և ժողովրդի մեջ տարածված ավանդությունների հիման վրա ներկայացնում են Հիսուսի կյանքի պատմությունը՝ ծննդից մինչև հարություն, մի ամբողջ շղթա, որ ամեն մի քրիստոնյա ժողովուրդ ներկայացրել է յուրովի:

Այս առումով Հիսուսի և նրա ծնողների՝ Եգիպտոս փախուստի մասին Մատթեոս ավետարանչի հպանցիկ ակնարկը (Բ, 13–15) ևս բացառություն չէ և պատկանում է սուրբգրային դրվագների այն շարքին, որոնք ընդարձակվել ու հարստացել են պարականոնների և առաջին հերթին՝ այսպես կոչված, *մանկության* ավետարանների շնորհիվ[1]: Այս գրվածքների շարքին է

[1] Այս գրվածքների շարքին են պատկանում *Հակոբոսի նախաավետարանը* (հայերեն թարգմանությունների համար տե՛ս *Անկանոն գիրք Նոր Կտակարանաց,* կազմ. **Տայեցի Ե.**, *Թանգարան հայկական հին և նոր դպրութեանց, Բ,* Վենետիկ, 1898, էջ 237–264, (այսուհետ՝ *Անկանոն գիրք Նոր Կտակարանաց:* Հայերեն Նախաավետարանն իր հերթին թարգմանվել է լատիներեն, տե՛ս **Stricker de E.**, *La forme la plus ancienne du Protévangile de Jacques. Recherches sur le papyrus Bodmer 5,* latin trans. par ***Quecke H.***, Bruxelles, 1961, pp. 441–473, և անգլերեն՝ տե՛ս **Terian A.**, *The Armenian Gospel of the Infancy, with Three Early Versions of the Protevangelium of James*, Oxford, 2008, pp. 150–170), *Թոմասի* (լատիներեն և հունարեն Ա և Բ տարբերակները տե՛ս **Tischendorf**

դասվում նաև հայկական *Մանկութեան աւետարանը*, որ, թեև հայկական ծագում չունի և հավանաբար թարգմանվել է ասորերեն բնագրից[2], այնուհանդերձ, հայ հեղինակներն այստեղ բազմաթիվ հավելումներ են արել: Ուստի և պատահական չէ, որ հայկական պարականոնը յուրովի է ներկայացնում սուրբ ընտանիքի՝ Եգիպտոսում, նրա սահմանակից երկրներում և ապա նաև՝ իրենց հայրենի երկրում անցկացրած տարիները և այս ժամանակաշրջանում տեղի ունեցած դեպքերը: Ընդ որում՝ այս պատմությունը ներկայացնելիս հայերեն պարականոնը *մանկության* մյուս ավետարանների շարքում աչքի է ընկնում իր հագեցվածությամբ՝ ինչպես սուրբ ընտանիքի անցած ուղու, այնպես էլ մանուկ Հիսուսի կատարած հրաշագործությունների մանրամասն նկարագրությամբ:

Հայկական *Մանկութեան աւետարանը*, թեև որոշակի համանմանություններ ունի նաև մեզ հասած *մանկության* մյուս ավետարանների հետ, այնուամենայնիվ, դրանց միջև առկա տարբերություններն այնքան ակնառու են, որ երբեմն համեմատության եզրեր գտնելը շատ ավելի դժվար է: Հայկա-

---

C., *Evangelia Apocrypha, adhibitis plurimis codicibus graecis et latinis maximam partem nunc primum consultis atque ineditorum copia insignibus,* Lipsiae, 1874, pp. 140–163; 164–180), *կևոծ-Մատթեոսի* (նույն տեղում, էջ 51–112), *Մարիամի ծննդյան* (նույն տեղում, էջ 113–121), *արաբական* (տե՛ս **Peeters P**., *Evangiles apocryphes*, vol. II. Paris, 1914, pp. 1–65), *ասորական* (տե՛ս **Budge W**., *The History of the Blessed Virgin Mary and the History of the Likeness of Christ, which the Jews of Tiberias made a mock at*, London, 1899), ինչպես նաև՝ հայկական (տե՛ս պարականոնի Ա և Բ տարբերակները, *Մնկանոն գիրք Նոր Կտակարանաց,* էջ 1–237: Տե՛ս նաև նույնի անգլերեն՝ **Terian A**., *The Armenian Gospel of the Infancy, with Three Early Versions of the Protevangelium of James*, pp. 1–150 և ֆրանսերեն՝ **Peeters P**., *Evangiles apocryphes*, pp. 69–286, թարգմանությունները) մանկության ավետարանները:

Սուրբ ընտանիքի՝ Եգիպտոսում անցկացրած տարիների մասին, թեև պարականոն ավետարաններից էականորեն տարբերվող, սակայն հարուստ տեղեկություն է հաղորդում նաև Թեոփիլոս Ալեքսանդրացուն (385–412 թթ.) վերագրվող *Տեսիլը*, որը, հեղինակի պնդմամբ, շարադրվել է իրեն հայտնված կույս Մարիամի անմիջական վկայությունների հիման վրա, տե՛ս **Suciu A**., "Me, This Wretched Sinner": A Coptic Fragment from the Vision of Theophilus Concerning the Flight of the Holy Family to Egypt", *Vigiliae Christianae* № 67 (2013), pp. 436–450:

[2] Նշենք, որ հայերեն թարգմանության համար աղբյուր հանդիսացած ասորերեն բնագիրն այժմ կորած է համարվում, իսկ մեզ հասած ասորական տարբերակը հայկականից (զուցե նաև նախագաղափարից) բովանդակային առումով շատ է տարբերվում և գրեթե ընդհանրություններ չունի վերջինիս հետ: Հայկական *Մանկութեան աւետարանի* ծագման և զարգացման մասին տե՛ս մեր նախորդ հոդվածում, **Մամյան Մ**., Գիր Տղայութեան ավետարանը, *ԲՄ* № 22, Ե., 2015, էջ 334–349:

կան պարականոնի առանձնահատկությունների շարքում նախևառաջ հարկ է նշել այն, որ ի տարբերություն նույնանման գրվածքների, որտեղ սուրբ ընտանիքը Բեթղեհեմից անմիջապես հետո հայտնվում է Եգիպտոսում,[3] հայ հեղինակները[4] գիտակցել են, որ Եգիպտոս հասնելու համար Հիսուսն իր ծնողների հետ պետք է անցներ սահմանակից մի շարք այլ վայրերով, ուստի, սուրբ ընտանիքի ճանապարհորդության համար նրանք գծել են որոշակի ուղի՝ ամենայն հետևողականությամբ նշելով ոչ միայն դեպի Եգիպտոս, այլ նաև՝ տունդարձի ճանապարհին նրանց անցնելիք քաղաքները.

> «Յարուցեալ Յովսէփ վաղվաղակի՝ առ զմանուկն և զմայր իւր և գնաց փախստական յԱսկաղոն, որ անուանեալ կոչի Յասխալոն… անտի ի Քեբրոն… անտի՝ յԵգիպտոս… եկին հասանել յերկիրն Մովաբու յանդիման Մամբրեի… և հասեալ նոցա յԱրաբացւոց քաղաք մի՝ որ անուանեալ կոչի Մալլա Քպիր Մտին… և եկին յերկիրն Ասրւոց ի քաղաք մի, որ որոյ անունն էր Շահապրաւ… և գնացեալ յերկիրն Քանանու ի քաղաք մի, որոյ անունն էր Մադիամ… և եկեալ յերկիրն Իսրայէլի ի քաղաք մի, որ կոչի Բոթոսորոն… և եկեալ ի քաղաքն Տապարիա… և գնացեալ նոցա յերկիրն Գալիլեա և ի քաղաք մի՝ որում անունն էր Արիմաթեայ…և ելեալ ի քաղաքէն անտի, երթային յանդիման լերինն Կարմեղայ, որ անուանի Արտեւան… և եկեալ հասեալ նոցա ի գեղ մի, որում անուն էր Եմաուս… և իւր եկն ի քաղաքն Նազարէթ՝ ի տուն իւր՝ յորում առաջին բնակեալ կային անդ, և կացեալ անդ զամս ութ և տասն. և Յիսուս էր ամաց երկոտասանից, որ և լինի երեսուն ամ»[5]:

Այս ուղեգծում հեղինակները ներառել են նախևառաջ այն վայրերը, որտեղ մանուկ Հիսուսն իրականացրել է իր հրաշագործությունները: Այնուամենայնիվ, պարականոնում երբեմն հանդիպում ենք նաև այնպիսի վայրերի, որտեղ տեղի ունեցած իրադարձությունները որևէ կերպ չեն առնչվում Հիսուսի աստվածային բնության բացահայտմանը, ինչպես օրինակ՝

---

[3] *Գեղծ-Մատթեոսի մանկության ավետարանում* Հիսուսն, ի պատասխան Հովսեփի բողոքի, կրճատում է անցնելիք ուղին, և երեսուն օրվա ճանապարհը նրանք անցնում են մեկ օրում, տե՛ս **Tischendorf C**., *Evangelia Apocrypha*, pp. 90–91.

[4] Մեզ հասած հայկական *Մանկութեան աւետարանը* բազմաշերտ ու բազմաթիվ լրամշակումներ անցած մի գրություն է, ուստի այն մեկ հեղինակի վերագրելը ճիշտ չի լինի:

[5] *Ագիանոն գիրք Նոր Կտակարանաց*, էջ 60, 70, 76, 82, 84, 91, 100, 106, 108, 112:

«Գնաց փախստական յԱսկողոն[6] քաղաք մեծ, որ անուանեալ կոչի Ցասխալոն մերձ առ սահմանօքն յՈվկիանոսի ծովուն. և անտի ի Քեբրոն, և անդ կացեալ նոցա ի ծածուկ ամիսս վեց: Եւ երթայր ինքն ոտիւքն ի վերայ երկրի, և գայր խաղալիս անկանէր ի գիրկս մօրն իւրոյ. և նա խանդաղատելով բարձեալ ի վերայ բազկաց իւրոց, զգուէր և գոհանալով փառաւոր առնէր զԱստուած»[7]:

Ասկաղոնի, Քեբրոնի, ինչպես նաև՝ նմանատիպ այլ՝ ժամանակին հայտնի քաղաքների մեջբերումը պարականոնում հավանաբար արվել է Հիսուսի և նրա ծնողների ճանապարհորդության պատմությունը հնարավորինս ճշմարտանման ներկայացնելու ձգտումով: Այնուհանդերձ, հայ հեղինակներին միշտ չէ, որ հաջողվել է պահպանել այս գրության թվացյալ պատմականությունը, քանի որ նշանավոր քաղաքների կողքին նրանք հաճախ հիշատակել են նաև այնպիսի քաղաքների անուններ, որոնց վավերականությունն այժմ դժվար է հաստատել, ինչպես օրինակ՝ վերոնշյալ «յԱրաբացւոց քաղաք մի, որ անուանեալ կոչի **Մալլա Քպիր Մտին**, որ թարգմանի Աստուծոյ մեծ քաղաք»[8] և ապա՝ «յերկիրն Ասորւոց ի քաղաք մի, որոյ անունն էր **Շահապրաւ**»[9], կամ՝ «…և եկեալ յերկիրն Իսրայէլի ի քաղաք մի, որ կոչի **Բոթոսորոն** …»[10] (ընդգծումները մերն են՝ Մ.Մ.), և՛:

Իրենց պատմությունները հյուսելով հիմնականում նորկտակարանային հայտնի դեպքերի հիման վրա՝ պարականոն ավետարանների և հատկապես հայկական *Մանկութեան աւետարանի* հեղինակները ջանացել են ցույց տալ, որ իրենց համար պակաս կարևոր չէ նաև հինկտակարանային ավանդություններին հետևելը:[11] Այսպես՝ հայերեն *Մանկութեան աւետարանում* Հիսուսը և նրա ընտանիքը Քեբրոնից անմիջապես հետո իջևանում

---

[6] Ասկողոնը (Աշկելոն) պաղեստինյան հնագույն քաղաքներից է՝ տեղակայված ծովեզերքին՝ Յաֆա և Գազա քաղաքների միջև: Սուրբ ընտանիքի այցելության ժամանակ Ասկողոնը ուժեղ և ծաղկող քաղաք էր, հելլենական մշակույթի կենտրոն, ուր հատկապես հայտնի էր Աստղոմվթի (Աթարգատես կամ Դերկետիա)՝ ձկան մարմնով ու կնոջ դեմքով աստվածուհու պաշտամունքը, տե՛ս **Meinardus O.**, *The Holy Family in Egypt, Cairo* (The American University in Cairo Press), 1986, p. 37:

[7] *Ագաթանգեղոս Նոր Կտակարանաց*, էջ 60:

[8] Նույն տեղում, 148:

[9] Նույն տեղում, 76:

[10] Նույն տեղում, 84:

[11] Այս առումով բացառություն է *Թոմայի մանկության ավետարանը*, որն ունի հակահրեական ուղղվածություն:

են «յերկիրն Եգիպտացւոց ի դաշտին Տայանու, և իջեալ անտի ի քաղաք»[12], որտեղ Տայանու դաշտի, ինչպես նաև անանուն քաղաքի հիշատակությունն ակներևաբար արվել է Դավթի Սաղմոսների ազդեցությամբ՝ «Որպէս արար զնշանս եւ զարուեստս իւր յերկրին Եգիպտացւոց եւ ի դաշտին Տայանու» (Սաղմ. ՀԷ, 43–44): Հիշյալ մեջբերման մեջ սաղմոսասացն, իհարկե, հիշում է Եգիպտոսի վրա տեղած տասն պատուհասների մասին, սակայն առանց ենթատեքստի դիտարկելու պարագայում այն կարող է վերաբերել այս երկրում հրաշամանուկ Հիսուսի կատարած սքանչագործություններին:

Հինկտակարանային ավանդության ևս մեկ արտացոլում է նաև *մանկության* գրեթե բոլոր ավետարաններում հանդիպող Եգիպտոսի կուռքերի կործանման մասին պատմությունը[13], որով իրականանում է Եսայու մարգարեությունը. «Ահաւասիկ Տէր նստեալ ի վերայ թեթեւ ամպոյ՝ եկեսցէ յԵգիպտոս, եւ շարժեսցին ձեռագործք Եգիպտացւոց յերեսաց նորա, եւ սիրտք նոցա լցին ի նոսա» (Եսայի ԺԹ, 1): Հատկանշական է, որ հայերեն *Մանկութեան աւետարանում* կուռքերի կործանման քաղաքը չի հիշատակվում, փոխարենը պարականոնի հեղինակները հայտնում են, որ այն տեղի է ունեցել Ապոլլոնի՝ արևի աստծո տաճարում.

> «…և ամենայն շինուածք տաճարին ի հիմէն անկեալ կործանեցան, և պատկեր կռոցն Ապողոնի և քուրմքն մեհենիցն և քահանայք կռոցն ընկղմեալ անդ ներքոյ շինուածոյն և սատակեցան. և այլ բազմութիւն քաղաքին որ անդ էին՝ փախեան ի տեղւոջէ անտի. և ամենայն կուռք և բազինք դիւացն, որ ի քաղաքին էին՝ անկեալ կործանեցան. և ամենայն շինուածք թղլըսըմներն՝ որ շուրջ զքաղաքաւն անշունչ պատկերք մարդկան, գազանաց և անասնոց՝ անկեալ կործանեցան»[14]:

---

[12] *Անկանոն գիրք Նոր Կտակարանաց*, էջ 60: Հավանաբար այստեղ նկատի է առնված Եգիպտոսի հնագույն քաղաքներից Տանիսը (այժմ՝ Սան էլ Հագար), որ Եգիպտոսի մայրաքաղաքն է եղել է XXI հարստության օրոք:

[13] Հայերեն պարականոնում յուրաքանչյուր քաղաք, ուր ոտք է դնում մանուկ Հիսուսը, տեղի դևերը շնչավորվում ու հայտարարում են՝ «Գայ մանուկ մի որդի թագաւորի արքայի մեծի»: Ուշագրավ է, որ դևերի անձնավորման այս երևույթին, որ բացակայում են Հիսուսի մանկության մասին պատմող այլալեզու գրվածքներում, հանդիպում ենք Նիկոդիմոսի ավետարանի մաս կազմող, սակայն հայերենով չպահպանված *Ներումն դժոխոց* հատվածում և դրա ազդեցությամբ գրված միջնադարյան ճառերում: Այս մասին մանրամասն տե՛ս մեր հոդվածում՝ **Մամյան Մ.**, *Նիկոդիմոսի ավետարանը* (Գործք Պիղատոսի) և դրա հայերեն թարգմանության առանձնահատկությունները, *Պատմաբանասիրական հանդես*, Ե., 2016, № 3, էջ 51–56:

[14] *Անկանոն գիրք Նոր Կտակարանաց*, էջ 65:

Վերոնշյալ հատվածն ուղղակիորեն վկայակոչում է նաև Երեմիայի մարգարեությունը՝ «եւ խորտակեսցէ զսիւնս արեգ քաղաքի, որ է յերկրիդ եգիպտացւոյ, եւ զմեհեանս դից նոցա այրեսցէ հրով» (Երեմիա ԽԳ, 11–13): Երեմիայի այս խոսքերը հետագայում որոշ կաթոլիկ հեղինակների առիթ է տվել ենթադրելու, որ մանուկ Հիսուսը հանգրվանել է Հելիոպոլսում[15] (արևի աստծո քաղաք): Այնուամենայնիվ, նույն քրիստոնյա Արևմուտքում մեծ հեղինակություն վայելող *կեղծ-Մատթեոսի ավետարանի* համապատասխան հատվածում (22–3) հիշատակված է Հերմուպոլիս քաղաքը[16]: Ուշագրավ է, որ հայ միջնադարյան (XII–XIV դդ.) որոշ հեղինակներ, ինչպես օրինակ՝ Վանական Վարդապետն իր «Հարցմունք և պատասխանիք»-ում[17], նրա հետևողությամբ Վարդան Արևելցին իր «Ժղլանք»-ում[18], ինչպես նաև՝ Խաչատուր Կեչառեցին իր «Վասն գալստեան Աստուծոյ առ մարդիկ կուսածին թագաւորին Քրիստոսի Աստուծոյ մերոյ»[19] ներբողում *կեղծ-Մատթեոսի ավետարանի* նմանողությամբ սուրբ ընտանիքի հանգրվանության վայր են նշում Եգիպտոսի Հերմուպոլիս քաղաքը: Քիչ հավանական է, որ վերոնշյալ հեղինակներն անծանոթ լինեին արդեն իսկ հայացված *Մանկութեան աւետարանին*, քանի որ նույն ինքը՝ Վարդան Արևելցին, իր գրվածքներում բազմաթիվ մեջբերումներ է անում այս պարականոնից[20]: Մյուս կողմից, արդեն իսկ ունենալով իրենց սեփական *մանկության* ավետարանը, հայերն անհրաժեշտություն չեն ունեցել թարգմանելու *կեղծ-Մատթեոսի ավետարանը*, թեև այս պարականոնի ինչ-ինչ հատվածներ որոշակի ճանաչում են ունեցել նաև հայկական միջավայրում: Դրանք այստեղ են ներթափանցել հիմնականում կաթոլիկ հեղինակների պատմությունների միջոցով, որոնք, իրենց հերթին, ստեղծվել են պարականոն գրվածքների, այդ թվում նաև՝ *կեղծ-Մատթեոսի*

---

[15] Այս մասին տե՛ս **Saint Alphonsus de Liguori**, *The Incarnation, Birth and Infancy of Jesus Christ, or the Mysteries of the Faith* (p. 500), Montreal, 1886, p. 274:

[16] Տե՛ս **Tischendorf C**. *Evangelia Apocrypha*, p. 90.

[17] «Իսկ Քրիստոս յորժամ յԵգիպտոս փախեաւ, ի Հերմուպօլիս բնակեցաւ», Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագիր թիվ (այսուհետ՝ ՄՄ) 2752, 15բ:

[18] «…զկնի ծեր աւուր ծննդեանն գնաց յԵգիպտոս ի քաղաք Հերմուպաւլիս», ՄՄ 341, 11ա:

[19] «Արդարն և անվախն Յովսէփ առ զՄարիամ և զմանուկն երթայր յաշխարհն յԵգիպտոսի ի քաղաքն Հերմուպօլիս», **Ավդալբեգյան Մ**., *Խաչատուր Կեչառեցի*, XIII–XIV դդ., Ե., 1958, էջ 191:

[20] *Վարդանայ Վարդապետի Աշխարհացոյց*, քնն. հրատ. **Հ. *Պէրպէրեանի,*** Փարիզ, 1960, էջ 41:

հիման վրա: Այսպես օրինակ՝ ՄՄ 565 ձեռագրում (XVIII դ.) տեղ գտած «Յաղագս, թէ յորժամ Քրիստոս ընդ մօրն իւրում և ընդ Յովսեփայ[21] սրբոյն փախեաւ յԵգիպտոս…» պատմությունը, որ ըստ գրիչ Յոհաննէս Երեւանցու (Քանաքեռցու)՝ «պատմէ Վինչէնցիոս Պէլվաչէնթէ ի գիրն իւր, որ կոչի Հայելի պատմութիւն, ի 7 գլուխն է գրոյն այնորիկ» (83ա), գրեթե բառացի կրկնում է *կեղծ-Մատթեոսի ավետարանի* համապատասխան հատվածի բովանդակությունը: Կարևոր է նշել սակայն, որ թեև հեղինակն իր պատմությունը շարադրելիս հիմնականում հետևում է *կեղծ-Մատթեոսի ավետարանին* (քարայրից հայտնված գազանների երկրպագությունը մանուկ Հիսուսին (83ա), Ափրոդիտոս քահանայապետի մասին հիշատակությունը (84ա), ևն), այնուամենայնիվ, սուրբ ընտանիքի հանգրվանության քաղաքին անդրադառնալիս նա շեղվում է այս պարականոնից և հետևելով կաթոլիկ այլ հեղինակներին՝ Հերմուպոլիսի փոխարեն նշում է Հելիոպոլիս քաղաքը.

> «Այժմ տեսցուք, թէ յորժամ ժամանեցին յերկիրն Եգիպտոս, առ յոր քաղաքն իցեն գնացեալք և որոց ի տան իցեն բնակեալք: Ասեն սուրբն Անսելմոս, սուրբն Թոմա, Ուկօն կարտինալն, սուրբն Բօնաւենթուրա և այլք պատմիչք հասարակաբար, թէ ի յերկու քաղաք եղեն բնակեալ երեխայն Յիսուս ընդ մօրն և սրբոյն Յովսէփայ: Եւ մինն ի քաղաքս այսոցիկ կոչի **Էլիոփոլի** և միւսն Բաբիլոն» (ընդգծումը մերն է՝ Մ.Մ.)[22]:

Առհասարակ, պարականոն գրվածքներին հատուկ է այն, որ գրեթե բոլոր կերպարներն այս կամ այն կերպ առնչություն ունեն նորկտակարանային հայտնի դեպքերին: Պատահական չէ, որ ըստ հայերեն *Մանկութեան աւետարանի*, սուրբ ընտանիքը Եգիպտոսում հյուրընկալվում է «ի տան իշխանի միոյ, որ էր ազգաւ եբրայեցի, անուն նորա Եղիազար, և ունէր որդի մի և դստերս երկու և անուն որդւոյ Ղազարոս, և աղջկանցն Մարթա և Մարիամ»[23]: Այս ավանդությանը տեղյակ է նաև սբ. Եպիփան Կիպրացուն վերագրվող ճառերի հեղինակը, ով, անդրադառնալով Եգիպտոսից Հովսեփի ընտանիքի տունդարձի պատմությանը, գրում է.

> «Եւ նա (Յովսէփ – Մ.Մ.) յարուցեալ առ զՄանուկն եւ զՄայր իւր եւ եկն յերկիրն Իսրայէլի՝ բերելով եւս ընդ նոսա զՂազար եւ զմայր նորա եւ զՄարիամ եւ զՄարթա քոյրս նորա, վասն զի հայր նոցա վախճանեալ էր»[24]:

---

[21] Անունն՝ ըստ բնագրի:

[22] ՄՄ 565, 82բ–84բ:

[23] *Անկանոն գիրք Նոր Կտակարանաց*, էջ 69:

[24] **Սուրբ Եպիփան Կիպրացի**, *Ճառք*, աշխ. *Հ. **Քյոսեյանի***, Էջմիածին, 2013, էջ 311:

Կուռքերի կործանման պատմությանը հետևում է հրաշագործությունների երկար շղթան: Դրանք ի տարբերություն *արաբական* ու *ասորական մանկության* ավետարանների, որտեղ Մարիամն օժտված է սքանչելագործություններ իրականացնելու շնորհով (իհարկե ոչ առանց Հիսուսի խանձարուրների կամ էլ նրան լողացրած ջրի հրաշագործ զորության[25]), հայերեն պարականոնում վերագրվում են բացառապես Հիսուսին. Մարիամի դերակատարությունն այստեղ սահմանափակվում է միայն Հիսուսի ծնողը լինելու իրողությամբ, ով երբեմն նույնիսկ հանդիմանում է որդուն նրա գործած այս կամ այն արարքի համար: Ընդ որում՝ գրվածքում առանցքային է մանուկ Հիսուսի խորին հարգանքը ոչ միայն մոր՝ Մարիամի, այլ նաև հոր՝ Հովսեփի նկատմամբ:

Նպատակ չունենալով քննելու Հիսուսի կատարած հրաշագործություններն առանձին-առանձին[26], դրանք ներկայացնենք ըստ բովանդակային առանձնահատկությունների.

• Հրաշագործություններ, որոնք դրսևորվում են Հիսուսի առօրյա, մանկական խաղերի մեջ՝ նրան ներկայացնելով ոչ միայն որպես կատարյալ մարդ ու կատարյալ Աստված, այլ նաև՝ որպես կատարյալ **մանուկ.**

> «…եղեւ Յիսուս ամաց երկուց և ամսոց չորից: Եւ ելեալ Յիսուս երթայր և շրջէր ընդ մանկունսն և ընդ տղայս փոքրագոյնս խաղ արկանել ընդ նոսա և խօսակից լինել. և առեալ հանէր զնոսա ի բարձրաւանդակ տեղիս ի յերդիք կամ ի պատուհան՝ ընդ որ նշոյլք արեգական մտանէր, և ասէր. Ո՞վ ոք ի ձէնջ կարիցէ զիրկս արկանել նշուլից լուսոյն, և իջանել անտի ի վայր՝ և ո՛չ վնասել: Եւ նոքա ասեն. ոչ ոք ի մէնջ կարիցէ առնել զայդ: Ասէ Յիսուս. Հայեցարուք ամենեքեանդ և տեսե՛ք. և զիրկս արկեալ Յիսուս շառաւիղից արեգականն

[25] Հայկական *Մանկութեան աւետարանում* որևէ տեղ չենք հանդիպում մանուկ Հիսուսին լողացնելու դրվագին, այնինչ հայ միջնադարյան հեղինակները, հավանաբար ծանոթ լինելով նաև Հիսուսի մանկության մասին պատմող արաբական ավանդություններին, իրենց երկերում մեջբերել են նաև այս հատվածը: Այսպես օրինակ՝ Խաչատուր Կեչառեցու «Վասն գալստեան Աստուծոյ առ մարդիկ կուսածին թագաւորին Քրիստոսի Աստուծոյ մերոյ» ներբողում տեղ գտած մի ավանդազրույցի համաձայն, Եգիպտոսում տուրբ ընտանիքը հյուրընկալվում է մի ղպտի կնոջ կողմից, ով ուրախությամբ լողացնում է Հիսուսին և զովեստի երգ ձոնում Մարիամին, տե՛ս ՄՄ 6995, 160ա: Այս զրույցն իր արտացոլումն է գտել նաև հայ բանահյուսության մեջ, տե՛ս **Ավդալբեգյան Մ**., *Խաչատուր Կեչառեցի*, էջ 84, ծնթ. 1:

[26] Հիսուսի կատարած հրաշագործությունների համառոտ նկարագրությունը տե՛ս **Մառ Ն**., *Ամառային ուղևորութիւնեան ղէպ ի Հայս, նկատողութիւնեան եւ քաղուածեան հայկական ձեռագրերից*, Վիեննա, (Մխիթարեան տպարան, 90 էջ), 1892, էջ 47–56:

մանրամաղ փոշոյն այնորիկ և գայր հասանէր վերուստ ի վայր, և ոչ վնասէր»[27]:

Մանկական այս չարաճճի արարքներն, այնուամենայնիվ, հայկական պարականոնում մանուկ Հիսուսին չեն հաղորդում այն փոքրիկ չարագործի կերպարը, որ արտահայտված է 2-րդ դարով թվագրվող *Թոմմայի մանկության ավետարանում*: Այսպես օրինակ՝ այդտեղ 5 տարեկան Հիսուսը չորացնում է մի երեխայի միայն այն բանի համար, որ նա ոստով ցաքուցրիվ էր արել իր հավաքած ջուրը, իրեն հրած մեկ ուրիշ տղայի անիծում է, և վերջինս տեղնուտեղը մահանում է, իսկ Հիսուսի ծնողներին բողոքելու եկած երեխայի ծնողները կուրացվում են: *Թոմմայի ավետարանում* արտահայտված Հիսուսի այս դաժան կերպարի երևույթը մեծ հետաքրքրություն է առաջ բերել գիտական շրջանակներում և դարձել վերջերս լույս տեսած մի շարք ուսումնասիրությունների հիմնական թեման[28]: Դաժանության այս դրսևորումները հավանաբար հակաքրիստոնեական անձանց կողմից ստեղծված պատմություններ համարելով՝ հայ հեղինակները դրանք դուրս են թողել հայերեն պարականոնից: Ընդհակառակը, հայկական *Մանկութեան աւետարանում* մանուկ Հիսուսը հանդես է գալիս որպես բարության մարմնավորում[29], ում բարյացակամ վերաբերմունքն իր հասակակիցների հանդեպ հաճախ գործում է նույնիսկ ի վնաս իրեն.

---

[27] *Անկանոն գիրք Նոր Կտակարանաց*, էջ 61:

[28] Տե՛ս օրինակ՝ **Whitenton M. R.**, "The Moral Character Development of the Boy Jesus in the Infancy Gospel of Thomas", *Journal of the Study of the New Testament*, vol. 38 (2), 2015, pp. 219–240; **Eastman D.**, "Cursing in the Infancy Gospel of Thomas", *Vigiliae Christianae*, vol. 69 (2), pp. 186–208; **Upson-Sala K.**, "Holy Child or Holy Terror? Understanding Jesus' Anger in the Infancy Gospel of Thomas", *Church History*, 82:1 (March 2013), pp. 1–39; **Aasgaard R.**, "From Boy to Man in Antiquity: Jesus in the Apocryphal Infancy Gospel of Thomas", THYMOS: *Journal of Boyhood Studies*, vol. 3 (1), 2009, pp. 3–20; **Dzon M.**, *The Image of the Wanton Christ-Child in the Apocryphal Infancy Legends of Late Medieval England,* Toronto, 2004; ևն:

[29] Բավական հետաքրքրական են քրիստոնեության և *Սաանա Ծոնի* էպոսի միջև առկա ընդհանրությունները՝ սկսած Մարիամի ու Ծովինարի հրաշալի հղիությունից՝ մի դեպքում Սուրբ Հոգուց, և մյուս դեպքում՝ ջրից, և վերջացրած վախճանաբանության մասին պատկերացումներով, որոնք արտահայտվում են մի դեպքում՝ Քրիստոսի երկրորդ գալստյամբ և մյուս դեպքում՝ Փոքր Միհրի քարանձավից դուրս գալով: Հայ ժողովրդի համար կարևորագույն նշանակություն ունեցող երկու երևույթների՝ կրոնի ու ազգային էպոսի նմանությունները դրսևորվում են նաև մանուկ Հիսուսի՝ հասակակիցների նկատմամբ անսահման բարությամբ լցված երեխայական խաղերի և տղայահասակ Սասունցի Դավթի սխրագործունեությունների միջև, որ, ի տարբերություն այ-

«Եւ նա սիրով և քաղցրութեամբ կոչէր զամենեսեան ի հաւանութիւն…Եւ նա ոչ տայր ումէք զմիմեանս հարկանել: Եւ եթէ ոք ի մանկանցն և ի տղայոցն զմիմեանս վիրաւորէին և գանալից առնէին, սակայն նա ձեռն դնէր և բժշկէր զհարեալն: Եւ որչափ եւս սիրով կոչէր զամենեսեան, և զտրտմեալսն և զխռովեալսն հաշտեցուցանէր, և ուրախ առնէր, բայց սակայն զինչ վիճոյ պատճառ լինէր ի միջի իւրեանց՝ դնէին ի վերայ Յիսուսի»[30]:

Հետաքրքրական է, որ հայկական պարականոնում իմաստային փոփոխության է ենթարկվել նաև Հիսուսի կատարած թերևս ամենից հայտնի՝ կավից թռչուններ պատրաստելու ու նրանց կենդանություն տալու հրաշագործությունը[31]: Այս դրվագը, որ բավական հին արմատներ ունի և սկիզբ է առնում *Թովմայի մանկության ավետարանից* (2:3)՝ փոխանցվելով համանման մյուս պարականոններին և անգամ իր արտացոլումը գտնելով Ղուրանում (V, 110)[32], հայկական տարբերակում ներկայացված է բոլորովին այլ կերպ: Հայերեն *Մանկութեան աւետարանի* հեղինակները, թեև ծանոթ են այս պատմությանը, այնուամենայնիվ, նրանք չեն հիշատակում ոչ շաբաթ օրվա օրենքը խախտող Հիսուսին, ո՛չ Հիսուսի օրինազանցության դեմ Հովսեփին բողոքած հրեա տղային, և ո՛չ էլ Հիսուսի արձագանքին, ով, ի պատասխան հոր հանդիմանանքի՝ ծափ զարկելով՝ օդ է թռցնում իր պատրաստած թռչուններին[33]: Փոխարենը, հայ հեղինակներն այս դրվագը դասում են Հի-

---

լալեզու էպոսներում հանդես եկող գլխավոր հերոսների նվաճողական ձգտումների, ուղղված է բացառապես հայրենի երկրի պաշտպանությանն ու բարօրությանը:

[30] *Անկանոն գիրք Նոր Կտակարանաց*, էջ151:

[31] **Kattan Gribetz S.**, "Jesus and the Clay Birds: Reading Toledot Yeshu in Light of the Infancy Gospels", *Envisioning Judaism*: *Studies in Honor of Peter Schäfer*, ed. ***Boustan R.***, ***Hermann K.***, ***Leicht R.***, ***Reed A.***, and ***Veltri G.***, with ***Ramos A.***; Tübingen, Mohr Siebeck, 2013, № 1, 1021–1048.

[32] **Robinson N.**, "Creating Birds from Clay: A Miracle of Jesus in the Qur'an and in Classical Muslim Exegesis", *The Muslim World*, № 79, 1989, pp. 1–13.

[33] Ուշագրավ է, որ հայ մատենագրության մեջ այս դրվագն արտացոլվել է իր նախնական տեսքով՝ հիմք հանդիսանալով Գրիգոր Նարեկացու վարքագրական մի շարք պատմությունների ստեղծման համար, տե՛ս **Տեր-Դավթյան Ք.**, «Հիսուսի Տղայության ավետարանների արտացոլքը հայ միջնադարյան գրականության մեջ», *Հայաստանը և քրիստոնյա Արևելքը*, Ե., 2000, էջ 336: Այս մեծարժեք հոդվածի հարգարժան հեղինակը հայկական *Մանկութեան աւետարանը* նույնացնում է *Հակոբոսի նախաավետարանին*, թեև դրանք տարբեր ստեղծագործություններ են, տե՛ս **Մամյան Մ.**, «Մանկութեան աւետարան»-ի և *Հակոբոսի նախաավետարանի* հայերեն թարգմանությունները (համեմատական քննություն)», *ԲՄ* № 23, 2016, էջ 334–349:

սուսի կատարած ոչ նպատակային հրաշագործությունների թվին՝ այն վերագրելով միմիայն նրա մանկական նկրտումներին.

> «Ասէ Յիսուս (ցմանկունսն). Ո՞ ոք ի ձէնջ կարիցէ առնել խաղ ինչ: Ասեն մանկունքն. Մեք ինչ ո՛չ գիտեմք առնել ինչ՝ բայց միայն զի տեսցուք: Ասէ Յիսուս. Հայեցարուք ամենեքեան և տեսէք… Եւ առեալ Յիսուս զկաւն ի ձեռին իւրում ճնճղուկ առնէր և փչեալ թռուցանէր ընդ երկինս…և տղայքն ի վեր նայեցեալ ընդ օդս, զի թռուցեալ երթային ձայն արձակելով. և նոցա զայն տեսեալ ամենեցուն հիացեալ զարմանային ընդ գործն Յիսուսի»[34]:

• Հրաշագործությունների հաջորդ խումբը կարելի է համարել նորկտակարանային հրաշքների նախօրինակները, որոնք արտահայտում են մանուկ Հիսուսի աստվածային բարեգութ էությունը: Աղբյուրի բխեցումը ժայռից, ջրում հայտնված ձկների խորովվումը առանց կրակի այրվող փայտերով և դրանցով քաղցած երեխաների հագեցումը (հմմ. Հովի. Զ, 1–14, Մարկ. Զ, 30–45; Ը, 1–9; Մատթ. ԺԴ, 13–22; ԺԵ, 32–39; Ղուկ. Թ, 10–17), բժշկումների շարքը, ինչպես օրինակ՝ կուրացած տղայի բժշկումը Մովաբի երկրում, երկու անդամալույծների բժշկումը «յարտեւան[35] լերինն» և Եմավուսում, տարեց ասորու բժշկումը «ի գիւղ մի, որում անուն էր Բուբորոն», ևս մեկ անդամալույծի բժշկումը Նազարեթում[36] (հմմ. Մատթ. Ը, 1–22; 28–33, Թ, 1–8; 27–38; ԺԲ, 9–13; Մարկ Ա, 40–45, Գ, 1–6; Ե, 1–20; Ղուկ. Ե, 12–26; Զ, 6–11; Ը, 26–39), երկու զինվորների ու ժառանգության համար վիճող որդիների հաշտեցումը (հմմ. Ղուկ. ԺԲ, 13–22), ծովի վրայով քայլելը (Մատթ. ԺԴ, 22–26; Մարկ. Զ, 45; Հովի. Զ, 15–21), ինչպես նաև՝ նմանա-

---

[34] *Անկանոն գիրք Նոր Կտակարանաց*, էջ 82–83:

[35] Այստեղ *պտուեան* բառը գործածված է *լեռան գագաթ* իմաստով (հմմ. Ղուկ. Դ, 29), տե՛ս **Աճառյան Հ.**, *Հայերեն արմատական բառարան*, Ե., 1971, էջ 343, Սակայն Ե. Տայեցու հրատարակած պարականոնի Բ տարբերակում այն կիրառված է հատուկ անվանումով՝ «լերինն Կարմեղայ, որ անուանի *Արտեւան*», տե՛ս *Անկանոն գիրք Նոր Կտակարանաց*, էջ 226:

[36] Ուշագրավ են այս պատմության և միջնադարյան մեկ այլ անկանոն երկի՝ *Պատմութիւն անդամալոյծին* միջև եղած ընդհանրությունները, որտեղ, ասկայն, իրադարձությունները զարգանում են Հարությունից հետո, և մանուկ Հիսուսի փոխարեն անդամալույծին բուժում է հարուցյալ Հիսուսը: Տե՛ս **Степанян Л.**, «Страница из истории средневековой армянской апокрифической литературы» («История расслабленного»), *Նյութեր Մատենադարանի հիմնադիր տնօրենի ծննդյան 90-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի (9–11 հոկտեմբերի, 2008 թ.)*, Ե., 2010, էջ 359–385: Տես նաև՝ **Outtier B.**, « Paralytique et Ressuscité (Cant 85 et 62). Vie des Apocryphes en Arménien », *Apocrypha* №8, 1997, pp. 111–119.

տիպ այլ հրաշքների առկայությունը պարականոնում նախանշում է Նոր Կտակարանում կատարվելիք որոշ իրադարձությունների ընթացքը:

• Այնպես, ինչպես Նոր Կտակարանում, հայերեն *Մանկութեան աւետարանում* ևս իրենց կարևորագույն տեղն ունեն մահացածների հարության հրաշքները, որոնք, սակայն, ի տարբերություն իրենց նորկտակարանային արտահայտչաձևերի (Մատթ. Թ, 18–23; Մարկ. Ե, 21–43, Ղուկ. Ը, 40–56; Հովի. ԺԱ, 1–24)՝ պարականոնում, թվում է, ի կատար են ածվում անհրաժեշտաբար՝ ձեռք բերելով պաշտպանական գործառույթ:

Տանիքից պատահաբար վայր ընկած և մահացած տղայի պատմությունը հանդիպում է գրեթե բոլոր *մանկության* ավետարաններում, և համաման գրությունների նմանողությամբ, հայկական պարականոնում ևս այս պատահարին ներկա գտնվող երեխաները տղայի մահվան մեջ մեղադրում են Հիսուսին՝ որպես «մանուկ մի օտարական… որդի ալեւորի միոյ»: Այս դեպքին հաջորդում է Հիսուսի դատավարությունը, որի ընթացքում, զրկված լինելով իր անմեղությունն ապացուցելու որևէ հնարավորությունից, Հիսուսն ստիպված է լինում հարություն տալ մահացած երեխային՝

> «Արաբիաս, որդի Թամարայ, բաց զաչս քո և տե՛ս և պատմեա մեզ եթէ ո եղեւ պատճառ կորստեան քո: Եւ նոյն ժամայն յարեաւ մեռեալն իբրեւ ի քնոյ զարթուցեալ… Ասէ Յիսուս ցմանուկն. Ո՛ մանուկ, ասա, ո՛ եղեւ պատճառ կորստեան քո: Ասէ մանուկն. Տէր, ոչ ես դու արեան իմոյ պարտական… այլ ես ի քուն եղեալ էի՝ անկայ վերուստ ի վայր և մեռայ»[37]:

Բացի այն, որ հայերեն *Մանկութեան աւետարան*-ում նմանատիպ դեպքերը բազմիցս կրկնվում են ոչ միայն պանդխտության տարիներին, այլ նաև հայրենի երկրում[38], և սեփական անմեղությունն ապացուցելու համար Հիսուսն ստիպված է լինում հարություն տալ այլ երեխաների ևս, պարականոնն աչքի է ընկնում նաև դատավարությունների ընթացքի մանրամասն

---

[37] *Անկանոն գիրք Նոր Կտակարանաց*, էջ 226: Թերևս միայն հայկական պարականոնին է հատուկ այն իրողությունը, որ երեխաներին հարություն տալուց որոշ ժամանակ անց հարուցյալները նորից Հիսուսի հրամանով ննջում են. «Ապա յետ անցանելոյ երից ժամուց, կայր կենդանի մարմնով մանուկն, նստէր և խօսէր ընդ ամենեսեան: Իսկ Յիսուս դարձեալ ասէ ցպատանեակն Արաբեայ. Ննջէ այսուհետեւ, և հանգիր՝ մինչեւ գայցէ հասարակաց յարութիւն: Եւ զայս ասացեալ Յիսուսի, անդէն վաղվաղակի եղ պատանեակն զգլուխն ի մահիճս իւր՝ ննջեաց»:

[38] Այսպես օրինակ՝ Ասորիքում Հիսուսը հարություն է տալիս անապատում ծարավից ու սովից մահացած տղային, Քանանում կենդանացնում է քարկոծված տղային և թագավորի սպանված որդուն (Բ), Արիմաթայում կենդանացնում է ջրհորն ընկած տղային:

նկարագրությամբ, որտեղ շեշտված են առանց վկաների Հիսուսի ինքնապաշտպանության ջանքերը: Դատավարության այս մանրազնին նկարագրությունները, ըստ Ի. Դորֆման-Լազարևի, ամենայն հավանականությամբ, հետագայի խմբագրությունների հետևանք են, որ գրվածքում տեղ են գտել հայերի՝ մահմեդական իշխանությունների տիրապետության տակ ընկնելուց հետո: Ըստ գիտնականի՝ նմանատիպ դատավարությունների ընթացքը, որտեղ իր դերակատարությունն ունի նաև Հիսուսի արարքների պատճառով պատասխանատվության կանչված Հովսեփը, արտացոլում է մահմեդականների տիրապետության պայմաններում ոչ մահմեդականների ծանր դրությունը, որոնք զրկված էին վկաներ ունենալու հնարավորությունից[39]:

• Եվ վերջապես՝ հայկական *Մանկութեան աւետարանում* առանձնանում են Հիսուսի այն հրաշագործությունները, որոնք ունեն գաղափարական նշանակություն, և որոնց շնորհիվ որոշ չափով հնարավոր է դառնում վերհանել պարականոնի դավանաբանական շերտերը: Դրանց շարքում ուշադրություն են գրավում հատկապես երկուսը՝ *Հիսուսը ներկարարի աշակերտ* և *Հիսուսը դպրոցում* պատմությունները[40], որոնք իրենց պատկերագրական արտացոլումն են գտել ՄՄ 7634 և 10805 ձեռագրերում[41]:

Հիսուսը դպրոցում պատմությունը, որ հյուսվում է տառերը մեկնելու Հիսուսի յուրահատուկ կարողության շուրջ, թերևս այն հազվադեպ դրվագնե-

---

[39] Նման եզրակացության հեղինակը հանգում է՝ զուգահեռներ անցկացնելով Հայոց նոր վկաների և մանուկ Հիսուսի դատավարությունների միջև, տե՛ս **Dorfmann-Lazarev I.**, «La transmission de l'apocryphe de l'Enfance de Jésus in Arménie», *Jesus in apokryphen Evangelienüberlieferungenn: Beiträge zu ausserkanonischen Jesusüberlieferungen aus verschiedenen Sprach- und Kulturtraditionen,* eds. ***Frey, J. and Schröter, J.,*** Tübingen: Mohr Siebeck, (Wissenschaftliche Untersuchungen zum Neuen Testament; 254), pp. 577–578:

[40] Հայերեն ձեռագրերում այս դրվագներն ունեն այլ խորագրեր, մասնավորապես՝ «Վասն տպոյ զՅիսուս Գամալիէլի յուսումն գրոց» և «Վասն տպոյ զՅիսուս յարուեստ ներկարարութեան», իսկ «Հիսուսը դպրոցում» և «Հիսուս ներկարարի աշակերտ» պայմանական խորագրերը գործածել ենք դրանց հակիրճությունը պահպանելու նպատակով:

[41] Վերոնշյալ ձեռագրերում տեղ գտած մանրանկարները (նկ. 1, 2, 3) պատկանում են մանուկ Հիսուսի կյանքը պատկերող բացառիկ նմուշներին: Այս ձեռագրերի ծաղկողն է Առաքել Գեղամեցին (XVI–XVII դդ.), որ հիշատակվում է նաև որպես գրիչ, տե՛ս **Գէորգեան Ա.**, *Հայ մանրանկարիչներ, մատենագիտութիւն, IX–XIX դդ.* Գահիրէ, 1998, էջ 48–49:

րից է, որ, սկիզբ առնելով *Թոմմայի մանկության ավետարանից*[42], այս կամ այն կերպ իր արտահայտությունն է գտել *մանկության* բոլոր, այդ թվում նաև՝ հայկական *Մանկութեան աւետարանում*: Ընդ որում, այս ավանդությունը փոխակերպվել և բավական հետաքրքիր նրբերանգներ է ստացել հայկական պարականոնում: Յոթնամյա (երբեմն էլ՝ հնգամյա)[43] Հիսուսի վարդապետի դերում այստեղ հանդես է գալիս Գամաղիել[44] անվանումով ոմն եբրայեցի (հմմ. Գործք Ե:34, 22:3): Հետևելով համանման ավետարանների ավանդույթին, հայկական պարականոնում նույնպես Հիսուսն իր ուսուցչից պահանջում է բացատրել տառերի խորհրդաբանական իմաստը, սակայն աշակերտի այս պահանջը վերջինիս համար անիրականանալի է, քանի որ, ըստ նրա, տառերը նախատեսված են միայն բառերը գրելու և ընթերցելու համար: Ի պատասխան վարդապետի այս արձագանքին, Հիսուսն ինքն է ստանձնում տառերի մեկնությունը, որ, ըստ որոշ ուսումնասիրողների, արտացոլում է դրանց և՛ երրորդաբանական, և՛ քրիստոսաբանական նշանակությունը[45]. «Գիրն անուն Աստուած թարգմանի, և Բանն Աստուած ծնունդ առնու և մարմնանայ. Բանն Աստուած գրոյն, և ի Բանէն Հոգին սուրբ, որ է Երրորդութիւն»[46]: Հիսուսի այս վերերկրային իմացությունը, սակայն, նրան չի խանգարում խորին հարգանք տածել Գամաղիելի նկատմամբ, մի երևույթ, որն իր հակառակ դրսևորումն ունի համանման, և հատկապես՝ *Թոմմայի մանկության ավետարանում*, որտեղ ուսուցիչները նույնիսկ պատժվում են իրենց չիմացության պատճառով:

Ոչ միայն տառերի խորհրդաբանական նշանակության, այլ նաև դրանց կազմության ալեգորիկ մեկնաբանության հետաքրքիր օրինակ է *Մանկութեան աւետարանի* համառոտ տարբերակներից մեկի՝ ՄՄ 6980-ի համապա-

---

[42] Տե՛ս **Paulissen L.,** « Jésus à l' école. L'enseignement dans l'Évangile de l'Enfance selon Thomas », *Apocrypha* 14, 2003, pp. 153–176.

[43] Հիսուսի տարիքի հստակ նշումը ցանկացած իրադարձության նկարագրության ժամանակ առանցքային է հայկական պարականոնի հեղինակների համար:

[44] *Մանկության* համանման ավետարաններում Հիսուսին ուսման են տալիս երեք տարբեր ուսուցիչների մոտ (պարբականում՝ երկու), որոնցից միայն մեկի անունն է հայտնի՝ Զակքեոս:

[45] **Horn C**., "Jesus at School among Christians, Jews and Muslims", *Forbidden Texts on the Western Frontier*, *The Christian Apocrypha in North American Perspectives*, ed. by ***T. Burke***, Toronto, 2013, p. 117.

[46] *Անկանոն գիրք Նոր Կտակարանաց*, էջ 87:

տասխան հատվածը: Քանի որ այն տեղ չի գտել ոչ Ե. Տայեցու[47], և ոչ էլ Ա. Տերյանի[48] հրատարակած գրքերում, հարկ ենք համարում հատվածն ամբողջությամբ մեջբերել այստեղ.

> «Իբրև եղև Յիսուս Ե ամաց, առեալ Մարիամ զմանուկն և ետ ի Գամաղիէլ քահանայն և ասէ. Կարդացոյ զմանուկս: Եւ գրեաց նմա Է գիր՝ ա, բ, գ, դ, ե, զ, է: Եւ ասէ Գամաղիէլ. Որդեակ կարդա՛յ (56ա) ասա՛ այբ ա, բեն բ, գիմ գ, դայ դ, եչ ե, զայ զ, է է: Կարդաց Յիսուս և ասէ. Վարդապետ, ասա՛ ինձ զմեկնութիւն գրերոյս: Ասէ Գամաղիէլ, դու կարդայ, ինչ փոյթ է քեզ մեկնութիւն գրոցն, դեռ ըսկի չես կարդացել, զմեկնութիւն խնդրես: Ասէ Յիսուս, եթէ ոչ մեկնես ինձ զգիրս, ոչ կարդամ: Ասէ Գամաղիէլ. Զինչ մեկնութիւն: Ասէ Յիսուս. Ապա այբն ընդէր է Գ ճիւղի կամ գիմի գլուխն կլոր կամ դան երեսն դէմ, և այլքն նոյնպէս: Ասէ. Որդի՛, մեք չեմք լուեալ մեր (56բ) վարդապետէն: Ասէ Յիսուս, թէ այլն ոչ կարես ասել, ասա ինձ, թէ այբն ընդէր է Գ ճիւղի կամ է ընդէր է անփակ: Եւ վարդապետն ասէ. Մեք չեմք լսել այդ ի վարդապետէ: Ասէ Յիսուս. Ապա ոչ գիտես, որ այբն Գ ճղի անուն Աստուծոյ է. երեք և միավորեալ և Է անփակ աստուածութեան է օրինակ, որ մի անհայր կամ անմայր Աստուած յաւիտեանս յաւիտենից: Եւ դու զայս ոչ գիտես, զամ ինչ ուսանիմ ի քէն: Իսկ զարմացաւ Գամաղիէլ, կոչեաց զՅովսէփ և զՄարիամ և ասէ ցնոսա. Քանզի մանուկն ձեր յոյժ իմաստուն է, շնորհք նորա աստուածատուր է (57ա), ես նորա նոր տախտակ գրեցի, նա բանս վարդապետական հարցանէ, որ ո՛չ ոք կարէ տալ պատասխանի: Ասէ: Պատրաստ պահեցէք զմանուկն ձեր, զի խիստ ճարտար է և իմաստուն և իշխանք մեր շատ են և դուք ղարիպ, չինի թէ խլեն ի ձեռաց ձերոց: Ո՛չ կամիմ ուսանել զնա, առէք այլ ուրիշ տեղ փոխեցէք (57բ)»[49]:

Ինչպես նշվեց, տառերի մեկնության այս յուրօրինակ պատմությունը, որի մասին դեռևս II դ. հիշատակում է Իրինեոս Լուգդունացին իր *Ընդդեմ հերձուածողաց* երկում[50], կարևորվում է պարականոնի դավանաբանական

---

[47] Նույն տեղում, էջ 86–90, 179–187:

[48] **Terian A.**, *The Armenian Gospel of the Infancy, with Three Early Versions of the Protevangelium of James*, pp. 92–99.

[49] Ժ. Շարդենը Պարսկաստան կատարած իր ճանապարհորդությունը նկարագրելիս տեղի քրիստոնյաների շրջանում տարածված աստվածաշնչյան ավանդությունների շարքում նշում է նաև հայկական *Սանկտթեան աւետարանը*, որից մեջբերված հատվածը հիշեցնում է ՄՄ 6980 ձեռագրի բովանդակությունը, տե՛ս **Jones J.**, *A New and Full Method of Settling the Canonical Authority of the New Testament*, vol. 2, 1798, Oxford, p. 232:

[50] Ըստ հեղինակի վկայության՝ այս ավանդությունը մեծ տարածում է ունեցել մարկիոնականների շրջանում, տե՛ս **Saint Irenaeus of Lyons**, *Against Heresis, 1.20, Ante-Nicene Fathers*, vol. 1, ed. by. ***Ph. Schaff***, Michigan, 1950, p. 345.

շերտերը պարզաբանելու տեսանկյունից ևս: Անճանաչելին ճանաչելու Հիսուսի այս կարողությունը, որ, ըստ էության, գնոստիկյան ուսմունքի կարևորագույն դրույթներից է, առիթ է տվել որոշ ուսումնասիրողների ենթադրելու, որ *Թոմնայի մանկության ավետարանը*, որ այս ավանդության հնագույն կրողն է, պատկանում է գնոստիկ հեղինակների գրչին: Այս տեսության հաստատումը կամ ժխտումը դուրս է մեր ուսումնասիրության շրջանակներից[51], այնուամենայնիվ, վերոնշյալ պատմության միջոցով գնոստիկյան որոշ տարրեր ներթափանցել են նաև հայկական *Մանկութեան աւետարանի*:

Գնոստիկությանը հատուկ ևս մեկ ուղղության՝ երևութականության ազդեցությունը հայկական *Մանկութեան աւետարանի* վրա իր արտացոլումն է գտել *Հիսուսը ներկարարի աշակերտ* դրվագում: Պատումը հյուսվում է մանուկ Հիսուսի անհնազանդ արարքի և հրաշագործության շուրջ, երբ, դպրություն ուսուցանելու անհաջող փորձից հետո, ծնողները նրան ներկարարության են տալիս ոմն Իսրայելի արվեստանոցում՝ «ի քաղաքն Տապարիա»[52]: Իննամյա Հիսուսին հանձնարարելով իր արվեստանոցի գործերը, վարպետն առժամանակ հեռանում է քաղաքից, իսկ Հիսուսը, ցանկանալով հնարավորինս արագ վերջացնել գործերը և միանալ խաղացող երեխաներին, բոլոր ներկերը խառնում է իրար.

> «Եւ Յիսուս յարուցեալ եկաց, բացեալ զդուռն տանն՝ և առեալ զամենայն ներկս քաղաքին և լից ի կարաս մի կապուտ ներկի, և եփեալ զկարասն և փակեաց զդուռն տանն, և ելեալ գնաց ըստ սովորութեան իւրում ի տեղի, որ խաղ առնէին տղայքն»[53]:

Հիսուսի այս արարքը զայրացնում է վարպետին, ով փորձում է պատժել նրան, սակայն փոքր-ինչ անց տեղի է տալիս՝ ընդունելով Հիսուսի գերբնական էությունը: Վարպետի այս կտրուկ մտափոփոխության համար առիթ են հանդիսանում նախ այն, որ Հիսուսը, ի զարմանս իրեն, կարասից

---

[51] *Թոմնայի մանկության ավետարանի* ծագման քննության մասին տե՛ս **Burke T.**, *The Infancy Gospel of Thomas: The Text, Its Origins, and Its Transmission,* Toronto, 2001:

[52] Կամ՝ *Տապարի:* Սա հավանաբար աստվածաշնչյան հայտնի Տիբերիա քաղաքն է, որ այս պարականոնում տեղ է գտել արաբական ինչողության նմանողությամբ՝ طبرية-*Tabariyyah:*

[53] *Անկանոն գիրք Նոր Կտակարանաց*, էջ 93:

անխաթար հատ-հատ հանում է բոլոր գույները, և ապա այն, որ իր՝ Հիսուսի հետևից գցած կոփիչն հրաշալի կերպով կանաչում է[54]:

Պատմության այսպիսի հանգուցալուծումը, կարծես թե կրկնում է պարականոնի դեպքերի հիմնական ընթացքը՝ Հիսուսը մեղադրվում է, սակայն կարճ ժամանակ անց նրան մեղադրողներն իսկ ճանաչում են նրա անմեղությունն ու աստվածային էությունը: Այնուամենայնիվ, այս պատումի մեջ, որն արտացոլում է Աստծո՝ որպես արարիչ-ներկարարի մասին պատկերացումները, կարևոր տեղ է զբաղեցնում մի դրվագ, որը հատուկ է միայն հայկական պարականոնին. խոսքը Հիսուսի բազմաթիվ կերպարանափոխությունների մասին է, որոնց միջոցով նրան առժամանակ հաջողվում է խույս տալ իր վարպետի հետապնդումներից.

> «Ելեալ Յիսուս ի ծովէն՝ նստէր ի ծովափին ի վերայ վիմի միոյ՝ ի նմանութիւն **տղայի**. Քաղաքացիքն հարցանէին ցնա և ասէին. Մանուկ, դու ո՞չ ես տեսեալ զորդին Յովսէփայ: Ասէ Յիսուս. Ո՛չ գիտեմ: Ապա լինէր ի կերպս **երիտասարդի**. Հարցանէին ցնա. Դու ո՞չ ես տեսեալ զորդին Յովսէփայ: Ասէ Յիսուս. Ո՛չ: Դարձեալ լինէր ի նմանութիւն **ծերոյ**: Հարցանէին ցնա. Ծե՛ր դու, տեսեա՞լ ես զորդի ծերոյ Յովսէփայ: Ասէ Յիսուս. Ո՛չ եմ տեսեալ»[55]:

Ի. Դորֆման-Լազարևը, որ իր չափազանց հետաքրքրական ու արժեքավոր հոդվածում[56] անդրադարձել է *Հիսուսը ներկարարի աշակերտ* պատմությանը՝ մանրազնին ու համակողմանիորեն ուսումնասիրելով և համեմատելով այն այլալեզու ավանդությունների հետ, եկել է այն համոզման, որ Հիսուսի վերոնշյալ կերպարանափոխություններում[57] արտահայտված է

---

[54] Այս ավանդազրույցի արտացոլումը հայ վարքագրության մեջ տե՛ս **Տեր-Դավթյան Ք.**, Գրիգոր Նարեկացու զրուցապատում վարքի աղբյուրներից, *Էջմիածին,* № 12, 2003, էջ 38–39:

[55] *Անկանոն գիրք Նոր Կտակարանաց*, էջ 97:

[56] **Dorfmann-Lazarev I.**, "Changing Colours and Forms, Theophanies in the Armenian *Script of the Lord's Infancy*", *Journal of Eastern Christian Studies* 68(3–4), 2016, pp. 349–381.

[57] Հիսուսի կերպարանափոխությունների երևույթը, որ, ինչպես երևում է, հոգեհարազատ է եղել հայերին, տեղ է գտել նաև Հիսուսի անձեռագործ դաստառակի մասին պատմող ավանդության մեջ: Ըստ այս պատմության՝ Աբգարը, Հիսուսի պատկերը ստանալու համար, նրա մոտ է ուղարկում իր նկարչին, սակայն վերջինիս՝ Հիսուսին նկարելու բոլոր ջանքերն ապարդյուն են անցնում՝ նրա բազմաթիվ կերպարանափոխությունների պատճառով. «Այնժամ պատկերահանն սկսաւ նկարել զպատկերն Յիսուսի, իբրև նկարեաց կրկին հայեցեալ եւեթ ըստ առաջնոյն չէր նմա, սկսաւ նոր գրել և դարձեալ հայեցաւ զի չէր նման այլ կերպս փոխեցաւ: Պատկերահանն զարհուրեալ ապուշ մնաց և եթող զնկարելն: Ասէ Յիսուս. Ընդէր հիացեալ ապշեցար. Ասէ պատկերահանն. Տէր, կամեցայ զամէնօրհնեալ պատկերն քո նկարել և ոչ կարացի… Յայնժամ

երևութականության ուսմունքը: Այս վարդապետությունը, որ հայերի համար ընդունելի է եղել այնքանով, որքանով որ դա հաստատում էր դեռևս VI դ. կեսերին Հայ եկեղեցու ընդունած Քրիստոսի մարմնի «անապականության» մասին ուսմունքը[58], ըստ նրա, հայերին հասանելի է եղել ոչ քաղկեդոնական ասորիների կողմից Հայաստան բերված պարականոն գրվածքների և հնագույն երևութական աղբյուրների միջոցով[59]:

Այսպիսով՝ նշենք, որ թեև հայերեն *Մանկութեան աւետարանը* պատկանում է հայ թարգմանական երկերի շարքին, այնուամենայնիվ, այս պարականոնի մաս կազմող *փախուստը Եգիպտոս* հատվածն ամենայն հավանականությամբ պատկանում է հայ հեղինակների գրչին: Վերջիններս, ծանոթ լինելով այլալեզու *մանկության* ավետարաններին և երբեմն նույնիսկ օգտվելով դրանցից, այնուհանդերձ, սուրբ ընտանիքի ճանապարհորդությունը ներկայացրել են յուրովի: Այս յուրահատկությունը նախևառաջ արտահայտվում է հրաշամանուկ Հիսուսի արարքներում, ում կերպարը հայ հեղինակները կերտել են ըստ իրենց սեփական պատկերացումների՝ այս նորաստեղծ պատկերից դուրս թողնելով այն դաժանությունը, որ հատուկ է համանման գրությունների Հիսուսին: Փոխարենը նրանք մանկանը օժտել են այնպիսի հատկանիշներով, որոնք բնորոշ են միայն Աստծո բարեգութ որդուն: Ընդ որում՝ բոլորովին չընկրկելով այն իրողությունից, որ իրենք գործ ունեն պարականոն գրության հետ, հայ հեղինակները մանուկ Հիսու-

---

Յիսուս առեալ զդաստառակն էարկ օրհնեալ երեսովն, և սուրբ պատկերն առ ժամայն նկարեալ եղև ի վերայ դաստառակին», տե՛ս ՄՄ 6980, 74բ–75ա: Տե՛ս նաև **Mapp H.**, *«Хитон Господен», Тексты и разыскания по армяно-грузинской филологии, т. I, СПб., 1900, 82–93, ինչպես նաև՝* **Outtier B.**, "Une forme enrichie de la Légende d'Abgar en arménien", *Apocryphes arméniens : transmission*, traduction, création, iconographie. Actes du colloque international sur la littérature *apocryphe* en langue *arménienne* (Genève, 18–20 septembre 1997, publications de l'Institut Romand des Sciences Bibliques1), Lausanne: Zèbre, éditeur et auteur; avec B. Outtier & J.-D. Kaestli, 1999, p. 138.

[58] VI դ. զարգացնելով Հիսուսի մարմնի անապականության մասին ուսմունքը՝ հետագայում հուլիանականները Հիսուսի մարդկային բնությունը հասցրել են նվազագույնի՝ հարելով երևութականությանը: Թեև հայերին հաճախ են մեղադրել ծայրահեղ հուլիանականության, այն է՝ երևութականության մեջ, Հիսուսի մարմնի անապականության հարցում հայերն ունեցել են «չափավոր» հուլիանական կողմնորոշում, համարելով, որ իր չարչարանքներն ու մահը Հիսուսը կրել է կամովին: Այս մասին մանրամասն տե՛ս **Տէր-Մինասեան Ե.**, *Հայոց Եկեղեցու յարաբերութիւնները սուրբ եկեղեցիների հետ*, Ս. Էջմիածին, 1908, էջ 84–135:

[59] **I. Dorfmann-Lazarev,** "Changing Colours and Forms, Theophanies in the Armenian *Script of the Lord's Infancy*", p. 350.

սի այս կերպարն այնքան կենդանի ու խոսուն են ստեղծել, որ թվում է՝ իրենք են ականատես եղել, թե ինչպես է Աստծո մանկահասակ որդին քայլում Եգիպտոսի, Ասորիքի, Արաբիայի կամ Իսրայելի քաղաքներով և հասակակից երեխաների հետ խաղալիս՝ ակամա ցուցադրում է իր գերբնական կարողությունները:

FLIGHT TO EGYPT. THE ACTS OF JESUS IN THE ARMENIAN "GOSPEL OF THE INFANCY"

MAMYAN M.

Summary

The Armenian "Gospel of the Infancy" belongs to the series of translated works, nevertheless, the second part of this apocryphon, including the flight to Egypt, presumably belongs to Armenian authors, who, being familiar with other analogous "Infancy" gospels and sometimes even using them, however, represent the holy family's journey to Egypt in their own, unique way. This uniqueness is mostly reflected in the actions of the infant Jesus, whose image is deprived of the cruelty ascribed to Him in similar writings. This new figure is built according to the own understanding of Armenian authors who endowed Jesus with features that are typical only of the merciful Son of God. Moreover, not being concerned for the fact that they are dealing with apocryphon, the Armenian authors depict the image of the infant Jesus in such a vivid form that it seems they themselves witnessed the little Son of God walking around the cities of Egypt, Assyria, Arabia or Israel and playing with peers, inadvertently demonstrating his supernatural capabilities.

БЕГСТВО В ЕГИПЕТ: ДЕЯНИЯ ИИСУСА В АРМЯНСКОМ «ЕВАНГЕЛИИ ДЕТСТВА»

МАМЯН М.

Резюме

Армянское «Евангелие детства» относится к серии переводных апокрифических памятников, однако вторая часть этого сочинения – «Бегство в Египет», по всей вероятности, была дополнена армянскими авторами. Будучи знакомыми с другими аналогичными евангелиями, а порою даже используя их в своих работах, армянские авторы весьма своеобразно описывали путешествие святого семейства в Египет. Сказанное прежде всего отражается в действиях младенца Иисуса, образ которого лишен излишней жестокости, присущей ему в подобных творениях. Таков образ малолетнего Иисуса в восприятии армянских авторов, наделивших его характерными лишь для сына Божьего милосердными чертами. Не принимая во внимание тот факт, что они имеют дело с апокрифом, армянские авторы изображали Иисуса так, словно сами были свидетелями того, как во младенчестве сын Божий ходил по городам Египта, Сирии, Аравии или Израиля и в играх со сверстниками невольно проявлял свои сверхъестественные способности.